

Անկախ աուդիտորի եզրակացությունը

«ՓՐԱՅՄ ԻՆՇՈՒԼԸՐՆՍ ԲՐՈՋԵՐՍ» ՍՊԸ  
2007թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

«ՓՐԱՅՄ ԻՆՇՈՒԼԸՐՆՍ ԲՐՈՋԵՐՍ» ՍՊԸ մասնակիցներին,

Հարգելի մասնակիցներ՝

Իմ կողմից իրականացվել է «ՓՐԱՅՄ ԻՆՇՈՒԼԸՐՆՍ ԲՐՈՋԵՐՍ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար պատասխանատվությունը կրում է Ընկերության ղեկավարությունը: Աուդիտորի պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտն իրականացվել է Աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվեն բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական թերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի թեսթային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Ընկերության ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Իմ կարծիքով «ՓՐԱՅՄ ԻՆՇՈՒԼԸՐՆՍ ԲՐՈՋԵՐՍ» ՍՊԸ 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները՝ Ընկերության ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի վերաբերյալ բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացված:

Երևան, 21 Փետրվարի, 2008թ.

ԱՌԴԻՏՈՐ  
Անհատ ձեռնարկատեր  
Կարեն Կիրակոսյան

